ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի ԹԻՎ 10-Ն ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 10-Ն որոշման վերնագրում և բովանդակության մեջ «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերն անհրաժեշտ է հանել, իսկ նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասին հղում կատարելու անհրաժեշտություն չկա, քանի որ որոշմամբ լրացում չի կատարվել:

Բացի այդ, որոշմամբ կատարված փոփոխություններն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
13.04.2020թ.